իշխանաց. ազնուամեծար եւ իշխանաշուք մեծատանց. գոյիւք զեղուն եւ ընչիւք յոգնաբեղուն Դոլվաթաւորաց. իմաստախոհ եւ հանճարեղ վաճառականաց, հաւատարիմ եւ հարազատ գանձապետաց, եւ իրիցփոխանաց, քրտնավատակ եւ արդարավաստակ հողագործաց, եւ այլ առհասարակ ամենայն ժողովրդականաց խմբից մեծամեծնամեծաց (sic) եւ փոքունց արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, երիտասարդաց եւ կուսից, եւ ամենայն չափու եւ հասակի ի Քրիստոս Աստուած հաւատացելոց եւ լուսաւորչածին երամոցդ խնդալ ի Տէր. Ամէն։ Շնորհք՝ սէր՝ խաղաղութիւն, եւ օրհնութիւն յԱստուծոյ Հօրէ գերսկզբնական պատճառ էին ինքնագոյի. գթութիւն եւ ողորմութիւն ի նորին խակակից բանին էականի նոյնազօրի. սէր եւ քաղցրութիւն համապատուի նոցին ամենազօր սուրբ Հոգւոյն կենարարի, իջցէ եւ հանգիցէ ի վերայ ձեր եկեսցէ եւ բնակեսցի առ ձեզ, իբրեւ զյորձանս գետոց, եւ որպէս զվտակս աղբերաց. անսպառ խաղացմամբ եւ առատապէս ծաւալմամբ։ Ընդ սրոյ հովանաւորութեամբն զօրասջիք միշտ, ամէն։ Զոր օրհնութիւն աստուածային, մաղթանք եւ բարեխօսութիւն ամենօրհնեալ սրբուհւոյ Աստուածածնին, եւ սրբոյն Յովհաննու Կարապետին. եւ սրբոյն Ստեփաննոսի նախավկային, եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, եւ ամենայն սրբոց երկնաւորաց եւ երկրաւորաց առ ձեզ լիցի, եւ օրըստօրէ լցուսցէ զձեզ փառօք, պատուօք եւ արդասալիր ճոխութեամբ, իբրեւ որթս եւ զոստս ուղարթախիտ եւ պտղալից դրախտ անկեալ ի գնացս Հոգւոյն վտակաց, կալ մնալ ձեզ խաղաղական կենաց, եւ պարագայց ամօք. յամերամ ժամանակաց, եւ խոր խաղաղութեամբ, եւ անտրբտում ուրախութեամբ մինչ ի խորին ծերութիւնն։ Ամէն։ Այլ եւ օրհնեսցէ զձեզ Տէր Աստուած մեր եւ զարդարեսցէ հոգւով եւ մարմնով,